

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/2

5 մայիսի 2014 թ.

Քննարկվեց «Ավշար Պրոդ» ՍՊԸ 18.03.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՍԿԴՎ 17.03.2014 թ-ի թիվ 1219372 արձանագրության դեմ:

«Ավշար պրոդ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Սույն թվականի փետրվարի 26-ին «Ավշար Պրոդ» ՍՊԸ-ն ներկայացրել է ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի դիմում, որի համաձայն կազմակերպությունը խնդրել է ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների մասով վերդարձնել 5.899.000 դրամ:

Ուսումնասիրության արդյունքներով հարկային տեսուչներն արձանագրել են հետևյալը. Կազմակերպության ԱԱՀ-ի դեբետային մնացորդը 26.02.2014 թ-ի դրությամբ կազմում է 22.202.347 դրամ, ուսումնասիրվող ժամանակահատվածներում ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների իրացման շրջանառությունը կազմում է 29.499.994 դրամ, որի 20% կազմում է 5.899.998 դրամ: Ուսումնասիրվող ժամանակահատվածների համար ներկայացված հարկային հաշվետվություններում առաջացել է բյուջե վճարման ենթակա 449.026 դրամ ԱԱՀ, այսինքն՝ ուսումնասիրվող ժամանակահատվածներում ըստ ՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկների հաշվանցման (դեբետ) ենթակա ԱԱՀ-ի գումար չի առաջացել: Հաշվի առնելով այն, որ դիմումում նշված ժամանակահատվածներում ԱԱՀ-ի շրջանառությունը կրեդիտային է եղել (սակայն դիմումի ներկայացման օրվա՝ 26.02.2014 թ-ի, դրությամբ կազմակերպությունը ունեցել է 22.202.347 դրամ ԱԱՀ-ի դեբետային մնացորդ) հարկային տեսուչները մերժել են 5.899.000 դրամ գումարի հետ վերադարձը:

Հիմք ընդունելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ի 6-րդ և 9-րդ կետերը՝ «Ավշար Պրոդ» ՍՊԸ-ն գանգատարկում է նշված արձանագրությունը, քանի որ ԱԱՀ-ի դեբետային մնացորդ պետք է ընդունել «... հարկ վճարողի դիմումի ներկայացման ամսաթվի դրությամբ ԱԱՀ-ի փաստացի դեբետային մնացորդը» (6-րդ կետ), և ոչ թե դիմումում ներկայացված ժամանակաշրջաններում առաջացած ԱԱՀ-ի դեբետային մնացորդը, և քանի որ դիմումում նշված 5.899.000 դրամ գումարը չի գերազանցում դեբետային մնացորդին, ապա այդ գումարը ամբողջությամբ ենթակա է վերադարձման (9-րդ կետ):

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Ավշար Պրոդ» ՍՊԸ (այսուհետ նաև կազմակերպություն) 26.02.2014 թ-ի դիմումի հիման վրա ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 03.03.2014 թ-ին հրապարակվել է թիվ 1219372 հանձնարարագիրը, որի համաձայն կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի՝ ԱԱՀ-ի

գրոյական դրոյքաչափով հարկվող գործարքներից առաջացած դենբետային մնացորդի ուսումնասիրություն: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՍԿԴՎ 17.03.2014 թ-ի թիվ 1219372 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որով մասնավորապես արձանագրվել է.

«Ավշար Պրոդ» ՍՊԸ կողմից ԱԱՀ-ի գրոյական դրոյքաչափով հարկվող գործարքների մասով 2013 թ-ի նոյեմբեր և 2014 թ-ի հունվար ամիսների համար 26.02.2014 թ-ին ՏՀՏ ներկայացված դիմումով հաշվանցման և (կամ) վերադարձի ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գումարը կազմում է 5.899.000 դրամ: Համաձայն մնացորդների վերաբերյալ տեղեկանքի կազմակերպության ԱԱՀ-ի դեբետային մնացորդը 26.02.2014 թ-ին կազմում է 22.202.347 դրամ:

Արձանագրությունում նշվել է նաև, որ ուսումնասիրվող ամիսների համար կազմակերպության կողմից ՏՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով ցույց է տրվել միայն բյուջե վճարման ենթակա ԱԱՀ՝ ընդամենը 449.026 դրամի չափով, այսինքն՝ ուսումնասիրվող ժամանակաշրջաններում ըստ ՏՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկների հաշվանցման (դեբետ) ենթակա ԱԱՀ-ի գումար չի առաջացել: Արդյունքում, ուսումնասիրվող ժամանակաշրջաններում դիմումով պահանջված 5.899.000 դրամ ԱԱՀ-ի դեբետային մնացորդի գումարը ենթակա չէ հաշվանցման և (կամ) վերադարձման:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի Հավելված 1-ի 8-րդ կետի համաձայն. «ԱԱՀ-ի գրոյական դրոյքաչափով հարկվող գործարքների գծով հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա ԱԱՀ-ի գումարների հաշվարկն իրականացվում է ըստ հաշվետու ժամանակաշրջանների: Ընդ որում՝

ա) եթե հարկ վճարողը ներկայացրել է որևէ (մեկ) հաշվետու ժամանակաշրջանում իրականացրած՝ ԱԱՀ-ի գրոյական դրոյքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելու մասին դիմում, ապա որպես ԱԱՀ-ի դեբետային մնացորդ ընդունվում է դիմումի ներկայացման օրվա և այդ հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի հաշվարկի ներկայացմանը հաջորդող օրվա դրությամբ, սույն կարգի 6-րդ կետին համապատասխան որոշվող՝ դեբետային մնացորդներից նվազագույնը.

բ) եթե հարկ վճարողը ներկայացրել է երկու և ավելի հաշվետու ժամանակաշրջաններում իրականացրած՝ ԱԱՀ-ի գրոյական դրոյքաչափով հարկվող գործարքների գծով այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցում և (կամ) վերադարձ կատարելու մասին դիմում, ապա որպես վերջին հաշվետու ժամանակաշրջանի դեբետային մնացորդ ընդունվում է սույն կետի «ա» ենթակետին համապատասխան որոշվող դեբետային մնացորդը, իսկ նախորդ հաշվետու ժամանակաշրջանների մնացորդ՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար ԱԱՀ-ի հաշվարկի ներկայացմանը հաջորդող օրվա դրությամբ, սույն կարգի 6-րդ կետին համապատասխան որոշվող՝ դեբետային մնացորդը»:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ կազմակերպության 26.02.2014 թ-ի դիմում պահանջվել է հաշվանցել և (կամ) վերադարձնել 2013 թ-ի նոյեմբեր և 2014 թ-ի հունվար ամիսների համար ԱԱՀ-ի գրոյական դրոյքաչափով հարկվող գործարքներից առաջացած դեբետային մնացորդը, իսկ կազմակերպության կողմից

ՏՀՏ ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով ուսումնասիրվող ամիսներում հաշվանցման (դեբետ) ենթակա ԱԱՀ-ի գումար չի առաջացել, արձանագրությամբ կազմակերպության պահանջը մերժվել է:

Քննարկման ընթացքում կազմակերպության ներկայացուցիչներին տեղեկացվեց նաև, որ նախորդ ամիսների դրությամբ առկա ԱԱՀ-ի դեբետային մնացորդը կարող է ուսումնասիրության արդյունքներով վերադարձվել համապատասխան ժամանակաշրջանի համար սահմանված կարգով դիմում ներկայացվելու դեպքում:

Սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և դրան առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ներկայացվել են քննարկման Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N1361-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Արձանագրությունը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ